«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՖԵՆՈՄԵՆ»

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Եվրոպական համալսարանի զբոսաշրջության ֆակուլտետը հրավիրում է ՁԵԶ և Ձեր ղեկավարած բուհ-ի պրոֆեսորադասախոսական կազմին, ասպիրանտներին և մագիստրատուրայի ուսանողներին մասնակցելու «Զբոսաշրջությունը 21-րդ դարի ֆենոմեն» թեմայով միջբուհական գիտաժողովին:

Գիտաժողովը անցկացվելու է սույն թվականի դեկտեմբերի 4-ին և նվիրված է՝

- զբոսաշրջության արդի հիմնախնդիրներին,
- հասարակության կայուն զարգացման հիմնախնդիրներին,
- զբոսաշրջության միջազգային շուկային Հայաստանի ինտեգրմանը:

Գիտաժողովի ոլորտը ներառում է Զբոսաշրջությունը և հարակից բոլոր գիտությունները, այդ թվում՝ աշխարհագրությունը, բնապահպանությունը, տնտեսագիտությունը, կառավարումը, մարքեթինգը, սոցիոլոգիան, մշակութաբանությունը, կրոնագիտությունը, հնագիտությունը, ճարտարապետությունը և այլն:

Կազմկոմիտե՝

1. **Բիշարյան Հեղինե** ՝ Եվրոպական համալսարանի ռեկտոր, մ.գ.թ., համանախագահ
2. **Գևորգյան Հուսիկ՝** Եվրոպական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆ.մ.գ. թեկնածու, ԵՀ պատվավոր պրոֆեսոր, համանախագահ
3. **Մանասյան Գոռ՝** Եվրոպական համալսարանի Զբոսաշրջության ֆակուլտետի դեկան, աշխ.գ.թ, դոցենտ, համանախագահ
4. **Վահանյան Գրիգոր՝** Եվրոպական համալսարանի գիտամեթոդական հանձնաժողովի նախագահ, տնտ.գ.դ.
5. **Թորոսյան Աշոտ՝** Եվրոպական համալսարանի ֆինանսավարչական տնօրեն
6. **Դանիելյան Հմայակ՝** Եվրոպական համալսարանի Զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, տեխ.գ.թ, դոցենտ
7. **Եղիազարյան Հասմիկ՝** Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրեն
8. **Օհանյան Գայանե՝** Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն
9. **Սիմոնյան Մանուչար՝** Եվրոպական համալսարանի Գավառի մասնաճյուղի տնօրեն

10. **Վարդապետյան Վահե՝** Եվրոպական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրեն
11. **Ավագյան Արամայիս՝** Երևանի պետական համալսարանի Սերվիսի ամբիոնի պրոֆեսոր, աշխ.գ.դ, պրոֆեսոր
12. **Սուվարյան Սեյրան՝** Երևանի պետական համալսարանի Սերվիսի ամբիոնի դոցենտ, աշխ.գ.թ, դոցենտ
13. **Դանիելյան Կարինե՝** Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Էկոլոգիայի և կայուն զարգացման ամբիոնի վարիչ, աշխ.գ.դ, պրոֆեսոր
14. **Սուվարյան Արզիկ՝** Հայ-ռուսական համալսարան, Տնտեսագիտության և բիզնեսի ինստիտուտ, Կառավարման, բիզնեսի և զբոսաշրջության ամբիոնի վարիչ, տնտ.գ.դ, պրոֆեսոր
15. **Մխիթարյան Խորեն՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տնտ.գ.թ, դոցենտ
16. **Ակոպյան Ցոլակ՝** Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի դեկանի ժ/պ, քաղ.գ.թ.
17. **Խաչատրյան Վիլեն՝** Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա, Կառավարման ամբիոնի վարիչ, տնտ.գ.թ, դոցենտ
18. **Մարտիրոսյան Լևոն՝** Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխ.գ.թ, դոցենտ

Գիտաժողովի քարտուղար

Բեգլարյան Նելլի ՝ Եվրոպական համալսարանի Զբոսաշրջության ֆակուլտետի դեկանի օգնական

Գիտաժողովի նախնական օրակարգը՝

2018թ. դեկտեմբերի 4

9:30-10:00 մասնակիցների գրանցում

10:00-10:45 գիտաժողովի բացում

10:45-11:00 սուրճի ընդմիջում

11:00-13:00 գիտական զեկուցումներ

13:00-14:00 ճաշի ընդմիջում

14:00-16:00 գիտական զեկուցումներ

Ստորև ներկայացված է մասնակցության հայտը:

«Զբոսաշրջությունը 21-րդ դարի ֆենոմեն» թեմայով միջբուհական գիտաժողովի մասնակցության

ՀԱՅՏ

(4 դեկտեմբերի, 2018 թ, ք. Երևան)

Մասնակցության համար խնդրում ենք լրացնել հետևյալ հայտը և մինչև սույն թվականի **նոյեմբերի 27-ը** ուղարկել գիտաժողովի քարտուղարություն beglaryan-nelly@mail.ru էլ.փոստով:

Ազգանուն, Անուն, Հայրանուն	
Գիտական աստիճանը, գիտական կոչումը	
Հիմնարկի անվանումը, պաշտոնը	
Մասնակցության ձևը (առկա/հեռակա)	
Զեկուցման/Հոդվածի անվանումը	
Հեռախոսը	
Էլ. հասցեն	

Մասնակիցների կողմից զեկույցները բանավոր կներկայացվեն գիտաժողովի ընթացքում, իսկ ընտրված զեկուցումները հետագայում կհրատարակվեն հոդվածների ժողովածուի տեսքով: Պահանջներին չհամապատասխանող հոդվածները կարող են մերժվել կազմկոմիտեի կողմից:

Զեկուցումների պահանջները

Զեկուցումները կարող են ներկայացվել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով՝ 5-10 էջերի սահմաններում: Սահմանվում են էջերի հետևյալ չափանիշները և պահանջները. Paper size A4 Font (հայերեն լեզվի համար) GHEA Grapalat Font (ռուսերեն և անգլերեն լեզուների համար) Times New Roman, Top 2 սմ Bottom 2 սմ, Left 3 սմ, Right 1,5 սմ Size 12pt. Line spacing 1,15 Tab 1 սմ:

Էջերի չափանիշներն ու պահանջները

1. *գիտական ոլորտ.* Ձեկույցը պետք է սկսվի գիտության ոլորտի նշումով (մեծատառերով, մգեցված, կողմնորոշումը՝ կենտրոն):

2. *Վերնագիր.* վերնագիրը դրվում է կենտրոնում, մեծատառերով, մգեցված (BOLD),

3.*Հեղինակի (հեղինակների)* անուն ազգանուն, բուհ, ամբիոն, գիտական աստիճան և կոչում (առկայության դեպքում), էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար (Bold, Italic, կողմնորոշումը՝ կենտրոն)

4. *Անոտացիա.* Անոտացիան հաջորդում է հեղինակի մասին տեղեկատվությանը, բաց թողնելով 1 միջտողային տարածություն: Այն պետք է ընդգրկի 60-100 բառ, որում հակիրճ պետք է ներկայացված լինեն կատարված հետազոտության հիմնական դրույթները

5. *Հիմնաբառեր.* հինաբառերը պետք է լինեն 5-6 բառ կամ բառակապակցություն

6. *Հոդվածի հիմնական բովանդակությունը.* Հոդվածի հիմնական բովանդակությունը հաջորդում է հիմնաբառերին՝ բաց թողնելով 1 միջտողային տարածություն: Հոդվածում ներկայացվում են նշանակալից գիտական արդյունքներ, որոնք նախկինում ոչ մի տեղ չեն հրատարակվել:

7. *Հոդվածի տեքստում տողադարձեր չեն արվում*

8. *Աղյուսակներ և գծապատկերներ.* Աղյուսակները և գծապատկերները դրվում են տեքստում դրանց մասին հիշատակելուց հետո: Աղյուսակների վերնագրերը դրվում են աղյուսակի վերևում, իսկ գծապատկերներինը՝ գծապատկերի ներքևում: Աղյուսակների և գծապատկերների վերնագրերը պետք է գրել 10 տառաչափով՝ Italic: Աղյուսակների ու գծապատկերների ընդհանուր ծավալը չի կարող գերազանցել հոդվածի ծավալի 20 տոկոսը,

10. *Օգտագործված գրականության ցանկ:* Օգտագործված գրականության ցանկը հաջորդում է հոդվածի հիմնական բովանդակությանը: Հոդվածի տեքստում օգտագործված գրականությունից կամ աղբյուրներից հղումները դրվում են տեսքստի համապատասխան մասում՝ քառակուսի փակագծերում՝ հաջորդական համարակալմամբ, համարի կողքին նշելով տվյալ աղբյուրի էջերը, որին հղում է արվել՝ բնագրի լեզվով (Օրինակ՝ [1], [4, 2-10 էջեր], [4, p. 110-111], [6, c. 22]):

Օգտագործված գրականության ցանկին հաջորդում են բնագրից տարբերվող 2 աշխատանքային լեզուներով հոդվածի վերնագիրը, հեղինակի (հեղինակների) անուն

ազգանունը, բուհը, ամբիոնը, գիտական աստիճանը և կոչումը (առկայության դեպքում), անոտացիան և հիմնաբառերը:

12. Հոդվածի տեքստում արված հղումները, բացատրությունները, մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) դրվում են նույն էջի տողատակում՝ հաջորդական համարակալմամբ, տառաչափը՝ 10pt:

Ընտրված հոդվածները կհրապարակվեն 2019թ. մարտ-ապրիլ ընկած ժամանակահատվածում

Բոլոր հարցերի դեպքում դիմել գիտաժողովի քարտուղարություն:

Հետադարձ կապ՝

Բեգլարյան Նելլի

«Եվրոպական համալսարան» հիմնադրամ

Զբոսաշրջության ֆակուլտետ

Հասցե՝ Դավիթ Անհաղթ 10

Հեռախոս՝ (+374) 55 523069, (+374) 93 114359

Էլ. փոստ՝ beglaryan-nelly@mail.ru, gor_manasyan@mail.ru

Շնորհակալություն մասնակցության համար: